

## ՀՀ Ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 7/6

23 փետրվարի 2016 թ.

Քննարկվեց Ա/Ձ Գագիկ Մուրադյանի 21.01.2016 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 17.11.2015 թ-ի թիվ 372/04 որոշման դեմ:

#### **Ա/Ձ Գագիկ Մուրադյանի գանգատում բերված փաստարկները.**

23.11.2015թ-ին Ա/Ձ Գագիկ Մուրադյանը ստացել է ՀՀ Ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության պետի 17.11.2015թ. թիվ 374/04 որոշումը՝ հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին:

Այդ որոշումով Ա/Ձ Գագիկ Մուրադյանից գանձվում է 385.108 դրամ գումար, որից 13.718 դրամը հաստատագրված վճարի գծով է և առաջացել է մինչև 01.01.2002թ. ընկած ժամանակահատվածում, իսկ 371.390 դրամը՝ պարտադիր սոցիալական վճարի գծով, որն առաջացել է 2009-2012թ.թ. ժամանակահատվածում, ներառյալ դրանց նկատմամբ հաշվարկված տույժերը:

Ա/Ձ Գագիկ Մուրադյանը տեղեկացնում է, որ դեռևս 30.11.1998թ-ին դիմում է մուտքագրել Աշտարակի տարածքային հարկային տեսչություն՝ Ա/Ձ-ի գործունեության դադարեցման տեղեկացմամբ, որից հետո առ այսօր որևէ գործունեություն չի իրականացրել, ինչի վերաբերյալ կարող են հավաստել նաև հարկային, սոցապահովության և վիճակագրության մարմինները (առկա չեն հաշվետվություններ, ստուգումներ, հաշվարկներ, մուծումներ, հայտարարություններ): Դիմումի պատճեն կցում եմ:

Վերոնշյալ որոշումը ստանալուց հետո, հաշվի առնելով, որ դեռևս գործունեության դադարեցման ժամանակ հարկային պարտք է ունեցել, որն այնքան էլ մեծ գումար չէ, չնայած «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1 հոդվածով սահմանված պարտքի վճարման վաղեմության մասին պահանջին, Ա/Ձ Գագիկ Մուրադյանը այն վճարել է 2015թ. նոյեմբեր ամսին:

Ինչ վերաբերվում է պարտադիր սոցիալական վճարին, ապա ինչպես վերը նշվել է, 11.12.1998թ.-ից դադարեցրել և առ այսօր որպես Ա/Ձ գործունեություն չի իրականացրել, հետևապես անհասկանալի է, թե ինչպես է առաջացել պարտքը: Գանգատաբերը կարծում է, որ պետք է կիրառված լիներ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջները:

Ելնելով վերոնշյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70 և 71 հոդվածների պահանջով Ա/Ձ Գագիկ Մուրադյանը խնդրում է անվավեր ճանաչել 17.11.2015թ. թիվ 374/04 որոշումը:

**«Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը».**

«ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով Ա/Ձ Գագիկ Մուրադյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 16.11.2015 թ-ի դրությամբ նրա չկատարված պարտավորությունները կազմում են 385.108 դրամ, որից հաստատագրված վճարի գծով 13.718 դրամ, սոցիալական ապահովության վճարների գծով 371.390 դրամ: Նշված պարտավորություններն առաջացել են հաստատագրված վճարի գծով 01.01.2002 թ-ի դրությամբ անձնական հաշվի քարտում առկա գումարները չվճարելու, իսկ սոցիալական ապահովության վճարների գծով՝ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված նվազագույն սոցիալական վճարների գումարները 2009-2012 թ.թ.-ի ընթացքում սահմանված ժամկետներում չվճարելու հետևանքով:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 17.11.2015 թ-ին ընդունվել է թիվ 372/04 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Գագիկ Մուրադյանից 385.108 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Քննարկման ընթացքում նշվեց, որ 2005-2011թ.թ. ընթացքում ընդունվել են մի շարք օրենքներ, որոնցով անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով սահմանվել են արտոնություններ: Բացի այդ, օրենքով նախատեսված պահանջներին համապատասխանող անձանց ցանկերը հարկային մարմինների կողմից ուղարկվել են պետական ռեգիստրի գործակալության համապատասխան տարածքային ստորաբաժանումներ՝ պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառում կատարելու, նրանց վկայականները անվավեր ճանաչելու և պարտավորությունները հրապարակելու համար: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Գագիկ Մուրադյանը հաստատագրված վճարի գծով սկսած 01.01.2002 թ-ից ունեցել է 13.718 դրամի չկատարված պարտավորություն, այն չի օգտվել վերը նշված օրենքներով նախատեսված արտոնություններից: Ընդ որում, հաստատագրված վճարի գծով 13.718 դրամի պարտավորությունը Ա/Ձ Գագիկ Մուրադյանի կողմից վճարվել է միայն Որոշումը ստանալուց հետո:

«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի հիման վրա 2009-2012 թ.թ.-ի համար նվազագույն սոցիալական վճարների գումարների հաշվարկման կապակցությամբ հարկ է նշել, որ մինչև 31.12.2012 թ-ը գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, անհատ ձեռնարկատերերը պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5000 դրամի չափով, մինչև հաջորդ ամսվա 15-ը: Ընդ որում, պետական գրանցման վկայականը ժամանակավոր հարկային մարմին հանձնած (մինչև 25.07.2012թ-ը) և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած



անհատ ձեռնարկատերը նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

Դա նշանակում է, որ անհատ ձեռնարկատիրոջ կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին հանձնած չլինելու դեպքում անհատ ձեռնարկատերը պարտավոր էր վճարել 5000 դրամ նվազագույն սոցիալական վճար՝ անկախ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ չիրականացնելու հանգամանքից:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Գագիկ Մուրադյանի կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին չի հանձնվել, ինչը և հիմք է հանդիսացել նվազագույն սոցիալական վճարի գծով պարտավորությունների հաշվարկման համար:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված պնդմանը, որ պետք է կիրառվեին «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված պահանջները, ապա դրանք հիմնավոր չեն, քանի որ պարտավորությունները ոչ թե հայտնաբերվել են Որոշումը կայացվելու ժամանակ, այլ դրանք անհատ ձեռնարկատիրոջ անձնական հաշվի քարտում հաշվառվել և հայտնի են եղել առաջացման իսկ օրվանից:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Չ Ո Ս Է՝

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 17.11.2015 թ-ի թիվ 372/04 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

